ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 փետրվարի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

16
(3225)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՎ ԿԼԻՆԻ ԻՆՏՐԻԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրների փոխանցմամբ՝ իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում լուրջ քննարկումների թեմա է դարձել, թե ով է լինելու կուսակցության նախընտրական ցուցակի առաջին կինը:

Փետրվարի 13-ին մեկնարկած եւ երեք օր շարունակված ՔՊ-ի ներքին ընտրությունների արդյունքներով պարզվել է, որ կանանց շրջանում ամենաշատ ձայները հավաքել է ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Հատկանշական է, որ համեմատաբար վերջերս ՔՊ-ին միացած Ավանեսյանը կարողացել է ավելի մեծ աջակցություն ստանալ, քան, օրինակ, կուսակցության երկարամյա թիմակից համարվող ԱԺ պատգամավոր Արփի Դավոյանը կամ ԱՄՆ-ում ՀՀ նախկին դեսպան, վարչապետի գլխավոր խորհրդական Լիլիթ Մակունցը, որին Փաշինյանն անվերապահորեն վստահում է: Կարճ ասած՝ տհաճ իրավիճակ է ստեղծվել ՔՊ-ում:

Կանանց վարկանիշային այս «մրցավազքում» երկրորդ հորիզոնականում է պատգամավոր Ալխաս Ղազարյանը, նրան հաջորդում են Արուսյակ Ջուլհակյանն ու Հասմիկ Հակոբյանը:

Այժմ ՔՊ-ում լարված սպասում են մարտի 27-28-ին նախատեսված փակ քվեարկությանը, որի արդյունքում վերջնականապես կորոշվի նախընտրական ցուցակի համարակալումը: Հատկապես ինտրիգային է համարվում երրորդ համարը՝ այն դիրքը, որը կուսակցության ներսում համարվում է առանցքային եւ քաղաքականապես կշռադատված որոշման արդյունք:

Իսկ կշռադատված որոշումը չի կարող լինել պատահականություն, որ կասկածելի անցյալով եւ IQ-ով ինչ-որ կերպար դառնա իշխանական առաջին կինը:



Փետրվարի 20-ին դատական համակարգը հավաքվելու է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի հրամանով հրավիրվել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողով: Նկատենք, որ օրակարգի մասին ոչինչ չի հրապարակվել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դատական համակարգում պատրաստվում են ակադեմիայի խորհրդի անդամի ընտրության: Պետք է մեկ դատավոր ընտրեն քաղաքացիական դատարանից, մեկ դատավոր էլ՝ քրեական դատարանից: Պարզեցինք, որ թեկնածուներից մեկը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մակար Կիրակոսյանն է, մյուսը՝ Լիլիթ Սարգսյանը, որն էլ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր է: Նրանց, իհարկե, մրցակիցներ կան, իսկ թե ովքեր են, դատական համակարգում դեռ լռում են:



Երեկ Աջափնյակում հնչած կրակոցներից հետո իրավապահ համակարգը կոնկրետ անձանց բնակարաններում խուզարկություններ է սկսել: Միջադեպի մասնակիցների բնակարաններում քննչական գործողություններ են իրականացվում: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ այս պահին ՀՀ քննչական կոմիտեում մի շարք երիտասարդներ հարցաքննվում են, կան ձերբակալվածներ, որոնց թիվը 10-ից ավելի է: ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ Աջափնյակ վարչական շրջանում տեղի ունեցած դեպքի առթիվ Երեւան քաղաքի քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 8-րդ կետերի (սպանության փորձը), 155-րդ հոդվածի (սպանությունը), 297-րդ հոդվածի 3-րդ մասի (խուլիգանությունը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասի (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը) հատկանիշներով:

⇨ էջ 4



Նարեկ Սամսոնյանի խափանման միջոցը փոխվել է տնային կալանքի: Այս մասին հայտնել է փաստաբան Ռուբեն Մելիքյանը՝ հավելելով, որ Սամսոնյանը դեռ գտնվում է հիվանդանոցում եւ անցնում է հետվիրահատական բուժում: Հիշեցնենք, որ նոյեմբերի 13-ի առավոտյան ձերբակալվել էին «Իմնեմնիմի» փոդքասթի համահեղինակներ Վազգեն Սաղաթելյանն ու Նարեկ Սամսոնյանը: Ալեն Սիմոնյանը հաղորդում էր տվել իրավապահներին «Իմնեմնիմի» փոդքասթում հնչած վիրավորական արտահայտությունների եւ սպառնալիքների վերաբերյալ:

ԵԿԵՂԵՑՈՒ ԿՇԻՌԸ

ԵԿԵՂԵՑԻՆ ԱՄՈՒՐ Է ԻՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ ՄՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

ArmLur.am-ի հետ զրույցում իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արդարադատության նախկին նախարար Գեւորգ Դանիելյանն անդրադարձավ եկեղեցի-պետություն լարված փոխհարաբերությանը, Վեհափառ Հայրապետի նկատմամբ երկրից դուրս գալու արգելքի սահմանման իրավաչափության եւ այլ հարցերի:

-Պարոն Դանիելյան, այս օրերին Ավստրիայում տեղի է ունենում Եպիսկոպոսաց Ժողովը, որը պետք էր եկեղեցական լիներ, սակայն Վեհափառ Հայրապետի նկատմամբ կալանք սահմանելուց հետո այն փոխվեց: Ձեզ համար սպասելի՞ էր, որ ընթացքը այսպիսին կլիներ:

-Ընդհանուր առմամբ, կարող եմ ասել, որ պատրաստ եմ ցանկացած զարգացումների, սպասումները դրական չեն, մթնոլորտը թույլ չի տալիս:

Հուսանք, որ համարժեք իրավաչափ դրսեւորումներ կլինի հատկապես Մայր Աթոռում ցանկացած նախաձեռնության նկատմամբ: Հույս ունեմ, որ ամեն ինչ կգործի Սահմանադրության շրջանակներում, սա ակնհայտ է, հետեւաբար իմ սուբյեկտիվ ակնկալիքները թողնենք հետագայի համար:

-Փետրվարի 13-ին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ թույլ չի տալու կաթողիկոսությունը Հայաստանից դուրս գա, եւ դրան անմիջապես հաջորդեց Վեհափառ Հայրապետի նկատմամբ կալանք սահմանելը: Սա ինչքանո՞վ է իրավաչափ, կխնդրեմ Ձեր իրավական գնահատականը ներկայացնեք:

-Խափանման միջոց է կիրառվել, որը բացառում է իր մասնակցությունը Եպիսկոպոսաց Ժողովին, բայց դա չի նշանակում, որ ընդհանրապես բացառում է, որովհետեւ ինքը կարող է հեռավար կարգով մասնակցել: Իհարկե, դա չի լինի այն անմիջական մասնակցությունը, որը կարող էր լինել ներկա գտնվելու պարագայում, բայց դա արդեն հարցի այլ կողմն է:

Ես մի անգամ արդեն ասել եմ, որ «Կաթողիկոսությունը արտահանել»՝նման արտահայտությունը ոչ մի աղերս չունի ոչ միայն իրականության, այլեւ կանոնական իրավունքի հետ, հետեւաբար մեկնաբանել հետեւյալ կարգի արտահայտությունները ես իմ խնդիրը չեմ համարում, իսկ ինչ վերաբերվում է արտագնա նիստերին, այդպես եղել է միշտ: Կարող եմ ասել, որ այդպիսի նիստեր ունեցել ենք նաեւ Արցախում, Ռուսաստանում, ինչպես նաեւ ԱՄՆ-ում երկու անգամ: Այսինքն՝ չի կարելի ասել, որ սա առաջին արտագնա նիստն է, ուղղակի մարդիկ տեղյակ չեն կամ չեն ուզում տեղյակ լինել, դա արդեն ավելի հավանական է:

Սա հզոր ուժ է, եթե պետությունը ցանկանում է օգտագործել ազգանվեր նպատակների, համազգային շահերի համար:

Այո՛, հզոր ուժ է, եթե մենք ուզում ենք սփյուռքը միավորել եւ նրա աջակցությունը տեսնել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հունաստանի նախագահական նստավայրում կայացել է պետական այցով Աթենքում գտնվող նախագահ Վահագն Խաչատուրյանի եւ Հունաստանի նախագահ Կոստանտինոս Տասուլասի գլխավորությամբ երկու երկրների պատվիրակությունների ընդլայնված կազմերով հանդիպումը:

Հանդիպման մեկնարկին նախագահ Տասուլասը շեշտել է, որ Հայաստանի եւ Հունաստանի միջեւ ձեւավորված հարաբերությունները քաղաքական հարթությունում ունեն անխոչընդոտ եւ դինամիկ զարգացում: Նրա գնահատմամբ՝ առկա բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը պետք է նոր խթան հաղորդի տնտեսական, ռազմաուսումնական եւ այլ ոլորտներում համագործակցության խորացմանն ու ընդլայնմանը:

Նախագահ Վահագն Խաչատուրյանը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար՝ընդգծելով, որ Հունաստանի հետ հարաբերությունները եղել եւ շարունակում են մնալ Հայաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը: Նախագահը կարեւորել է փոխադարձ վստահության վրա հիմնված գործընկերությունը եւ պատրաստակամություն հայտնել հետեւողական քայլերով զարգացնել երկկողմ օրակարգը:

Հանդիպման ընթացքում կողմերը հանգամանալից անդրադարձել են տարբեր ոլորտներում առկա փոխգործակցության ներուժի լիարժեք իրացման հնարավորություններին: Քննարկվել են տնտեսական կապերի ակտիվացման, ներդրումային միջավայրի խթանման, գործարար շրջանակների միջեւ ուղիղ կապերի ձեւավորման եւ համատեղ ծրագրերի իրականացման հարցեր: Կարեւորվել է նաեւ ռազմաուսումնական համագործակցության շարունակականությունն ու դրա հետագա զարգացումը:

Կողմերն ընդգծել են միջազգային կառույցներում, այդ թվում՝ Եվրամիությունում, Եվրախորհրդում, ՄԱԿ-ում եւ այլ բազմակողմ հարթակներում արդյունավետ փոխգործակցության նշանակությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների եւ փոխադարձ նաջակցության վրա:

Անդրադարձ է կատարվել նաեւ Հարավային Կովկասի տարածաշրջանային զարգացումներին: Քննարկվել են խաղաղության օրակարգի առաջմղման, սահմանների բացման եւ տնտեսական ապաշրջափակման ուղղությամբ իրականացվող քայլերն ու նախաձեռնությունները: Կողմերը կարեւորել են կայունության եւ երկարաժամկետ խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերի հետեւողական շարունակությունը՝ տարածաշրջանում համագործակցության եւ տնտեսական փոխկապակցվածության խորացման նպատակով:

ՕԳՏԱԿԱՐ Է

Վրաստանի արտաքին գործերի նախարար Մակա Բոչորիշվիլին հայտարարել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նոր ճանապարհների կառուցումն օգտակար է Հարավային Կովկասի համար: Վրաստանի ԱԳ նախարարն այդ մասին ասել է «Imedi LIVE» հաղորդման եթերում:

Մեկնաբանելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ տրանսպորտային նոր նախաձեռնություններին եւ այդ համատեքստում Վրաստանի դերին՝ Մակա Բոչորիշվիլին նշել է, որ ոչինչ չի կարող փոխարինել տարածաշրջանում Վրաստանի ռազմավարական դերակատարմանը:

Նրա խոսքով՝ Վրաստանի ռազմավարական դիրքի շնորհիվ երկիրն առանցքային տրանսպորտային հանգույց է, իսկ նոր ճանապարհների բացակայությունը կթուլացնի Վրաստանի պոտենցիալն այդ առումով:

Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն ընդգծել է, որ նոր ճանապարհների շինարարությունը կարեւոր ակտիվ է տարածաշրջանի համար: Նրա գնահատմամբ՝ որոշակի փորձեր կան նվազեցնել Վրաստանի դերը, սակայն իրականությունն այն է, որ, չնայած նոր ուղղությունների ի հայտ գալուն, Վրաստանը պահպանում է իր ռազմավարական նշանակությունը համաշխարհային աշխարհաքաղաքական քարտեզի վրա:

«Այսօր ակտիվորեն խոսում ենք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նոր ճանապարհների կառուցման մասին, ինչը, կարելի է վստահաբար ասել, օգտակար է տարածաշրջանի համար: Եթե դա զարգանա, եւ մեր տարածաշրջանում նոր ճանապարհներ ավելանան, մեր տարածաշրջանի դերը տրանսպորտային հասանելիության առումով կմեծանա, սակայն ընկալելի չէ, որ ինչ-որ ճանապարհ կփոխարինի Վրաստանին: Պահանջարկն ամեն տարի աճում է եւ չի նվազում: Նույնիսկ, եթե դրան ավելանան եւս երեք կամ չորս երթուղիներ, դա, հավանաբար, բավարար չի լինի այն ամենի համար, ինչ տեղի է ունենում Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ, երբ խոսքը բեռնափոխադրումների մասին է: Մենք այս ամենին լավ ենք նայում, դա լավ է, մենք ուրախ ենք, մեզ դա դուր է գալիս եւ մենք դա չենք դիտարկում որպես Վրաստանի ճանապարհի հետ մրցակցող ճանապարհ»,- ասել է Վրաստանի արտաքին գործերի նախարարը:

ՉՄՇԱԿՎԱԾ ՈՐՈՇՈՒՄ

Ռուսաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն անդրադարձել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը, թե անհրաժեշտ է, որպեսզի Մոսկվայի եւ Երեւանի հետ բարեկամական հարաբերություններ ունեցող որեւէ երկիր Ռուսաստանից գնի Հայաստանի երկաթուղային ցանցի կառավարման կոնցեսիոն իրավունքը:

TASS գործակալության հետ զրույցում Շոյգուն կարծիք է հայտնել, որ Հայաստանի իշխանությունների այդ ցանկությունը չմշակված որոշում է, եւ որ այդ քայլին գնալու պարագայում կառուցված համակարգը կարող է փլուզվել մեկ գիշերվա ընթացքում:

«Գնահատական չեմ տա երկաթուղային տնտեսության կառավարման հարցում այլ երկրների կոմպետենցիային, բայց կարող եմ վստահ ասել, որ դժվար թե որեւէ այլ ընկերություն կարողանա ամբողջությամբ փոխարինել ռուսական երկաթուղային փոխադրողին, որն արդյունավետ ու երկար ժամանակ աշխատել է Հայաստանում՝ ոչ ամենահեշտ պայմաններում: Գրեթե երկու տասնամյակ կառուցված համակարգը կարող է պարզապես փլուզվել մեկ գիշերվա ընթացքում: Դրա համար «բարեկամական ոչ մի երկիր», բնականաբար, պատասխանատվություն չի ստանձնի: Հույս ունեմ, որ պատասխանատու որոշումներ կայացնելուց Հայաստանի ղեկավարությունը հանդես կգա բացառապես իր քաղաքացիների շահերից»,- ասել է Սերգեյ Շոյգուն:

ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղարը նշել է, թե «Հարավկովկասյան» երկաթուղի ընկերությունը պատասխանատու կերպով իրականացնում է կոնցեսիոն պայմանագրով նախատեսված կետերը, այդ թվում՝ այն կետերը, որոնք վերաբերում են ներդրումներին: Շոյգուի խոսքով՝ այս ընթացքում Ռուսաստանի ներդրումները Հայաստանի երկաթուղային ճանապարհների, այդ թվում՝ շարժակազմերի վրա, կազմել են ավելի քան 30 միլիարդ ռուբլի:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ավելի վաղ հայտարարել էր, որ որեւէ երրորդ երկիր, որը ջերմ հարաբերություններ ունի եւ՛ Հայաստանի, եւ՛ Ռուսաստանի հետ, պետք է ՌԴ-ից գնի Հայաստանի երկաթուղու կոնցեսիոն կառավարման իրավունքը:

«ԹՐԻՓՓ-ի շրջանակներում հիմա կան ուժեր, որ ասում են՝ եկեք այնպես անենք, որ Մեղրիից հետո, երբ երկաթուղին մտնում է Նախիջեւան, շրջանցի Հայաստանը, ասում են՝ տեսեք՝ Հայաստանի երկաթուղին ՌԴ կառավարման ներքո է: Ցավոք սրտի, Ռուսաստանի եւ շատ երկրների հարաբերություններ սուր են, բայց մենք ասում ենք, որ երկաթուղին Հայաստանի սեփականությունն է, եւ Ռուսաստանը չի ցանկանում եւ խոչընդոտ չի հարուցի մեր տարածաշրջանային նախագծերի վերաբերյալ: Սրա մասին ՌԴ նախագահի հետ էլ եմ խոսել, գիտեմ, որ աջակից է այս բոլոր ծրագրերին: Խնդիրն այն է, որ մի շարք երկրներում ավելի ծանրակշիռ է դառնում այն կարծիքը, որ Նախիջեւանից հետո պետք չի Հայաստանով շարունակել, որովհետեւ երկաթուղին ՌԴ կառավարման ներքո է»,- ասել էր վարչապետը՝ հավելելով, որ ստեղծված իրավիճակում Հայաստանը ռազմավարական դիրքերի ու մրցակցային առավելության կորուստ է ունենում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Նախկին ոստիկանապետ Վալերիյ Օսիպյանի եւ նրա կնոջ՝ Լուսինե Թադեւոսյանի՝ Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործը մտավ Հակակոռուպցիոն դատարան: Գործը մակագրվել է դատավոր Կարապետ Բադալյանին: Վալերիյ Օսիպյանն ու կինը՝ Լուսինե Թադեւոսյանը, երեկ հրավիրվել են Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Նրանց պատկանող գույքի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն: Դատախազություն են հրավիրվում գործի նյութերին ծանոթանալու եւ դիրքորոշում ներկայացնելու համար:

2018թ. իշխանափոխությունից հետո Վ. Օսիպյանը նույն տարվա մայիսի 10-ին նշանակվեց ոստիկանության պետի պաշտոնում: Այնուհետեւ վարչապետի՝ 2019թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ՝ Վ. Օսիպյանը նշանակվեց վարչապետի գլխավոր խորհրդական: Օրեր անց՝ հոկտեմբերի 7-ին, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Վ. Օսիպյանն ազատվեց վարչապետի գլխավոր խորհրդականի պաշտոնից:

Նշենք, որ այս փուլում Գլխավոր դատախազությունը չի հանրայնացնում, թե ինչ գույքերի առնչությամբ է իրականացրել ուսումնասիրություն: Պատճառն այն է, որ գործի նյութերին ծանոթանալուց հետո շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել ապացույցներ, միջնորդություններ, եւ ենթադրաբար բռնագանձման ենթակա գույքի ցանկում կարող է կատարվել փոփոխություն: Ավելին, Վ. Օսիպյանի դեմ հարուցված քրեական գործը կա, որով նա մեղադրյալի աթոռին է մարտի 1-ի քրեական վարույթով:

Ք. Մ.

ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 20-ին՝ ժամը 19:00-ին, Արագածոտնի թեմի Կարմրաշենի Սուրբ Աստվածածին եկեղեցում կկատարվի միասնական ժամերգություն եւ միասնական աղոթք: Այս մասին հայտնում են Արագածոտնի թեմից: «Հայցում ենք ամենքիդ աղոթական ներկայությունը՝ աղոթելու հանիրավի անազատության մեջ գտնվող Թեմական Առաջնորդ սիրելի Մկրտիչ Սրբազանի, Միքայել Սրբազանի, Բագրատ Սրբազանի, Արշակ Սրբազանի, անազատության եւ գերության մեջ գտնվող մեր զավակների, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու անսասանության, հայրենիքի բարօր ընթացքի եւ ամենքի համար»,- ասված է հաղորդագրությունում:

ՎՏԱՐՎԵԼ ԵՆ

2025թ. Ռուսաստանից վտարվել է ավելի քան 70 000 օտարերկրացի, որոնք խախտել են օրենսդրությունը: Ինչպես տեղեկանում ենք «Ինտերֆաքս» գործակալությունից, այդ մասին հայտարարել է ՌԴ ներքին գործերի նախարար Վլադիմիր Կոլոկոլցեւը. «Անցյալ տարի օրենսդրությունը խախտելու համար վտարվել է 72 000 օտարերկրացի: Իհարկե, հարց է առաջանում՝ կարո՞ղ էինք տասն անգամ ավելի շատ արտաքսել: Պատասխանում ենք՝ կարող էինք, եթե դրա համար էլի ֆինանսավորում լիներ»:

ՍՏԱՑԱԾ ՔՎԵՆԵՐԸ

ՔՊ–Ի ՏԵՍԱՆԵԼԻ ԴԵՄՔԸ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՊ անդամ Տարոն Չախոյանը եւս կուսակցության ներսում լուրջ աջակցություն չի ստացել:

Չնայած այն հանգամանքին, որ Չախոյանը մի քանի տարի է՝ ակտիվորեն ներգրավված է քաղաքական գործընթացներում եւ համարվում է ՔՊ-ի տեսանելի դեմքերից մեկը, նա 1028 պատվիրակներից ստացել է ընդամենը 204 քվե:

Արդյունքում, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի առաջին փուլի ընտրություններում Տարոն Չախոյանը հայտնվել է միայն 75-րդ հորիզոնականում՝ դուրս մնալով լավագույն 50-յակից: Ըստ մեր աղբյուրների՝ Չախոյանի 50-յակում չլինելը ՔՊ-ականների համար անսպասելի է եղել, քանի որ վերջինս ՔՊ-ի ամենաակտիվ քարոզիչն է համարվում:

Մենք Տարոն Չախոյանից փորձեցինք պարզել, թե երբվանից է նա անդամակցում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը, եւ արդյոք սպասելի էին արդյունքները:

«Ընդամենը 2-3 ամիս է, ինչ հանդիսանում եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ ու, բնականաբար, այս կարճ ժամանակահատվածում չեմ հասցրել կուսակցական լայն գործունեություն ծավալել, ծանոթանալ կուսակցական գործընկերների հետ: Սակայն անգամ այդ պարագայում ստացել եմ մեծաթիվ վստահության քվեներ, ինչի համար շնորհակալ եմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատվիրակներին»,-ասաց Չախոյանը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուկրաինան տեսականորեն կարող է ընտրություններ անցկացնել, եթե հաջողվի երկու ամսով հրադադարի ռեժիմ հաստատել: Նման կարծիք է հայտնել Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին, փոխանցում է ՈՒՆԻԱՆ-ը:

«Կարծում եմ, որ մեր գործընկերները պետք է պատասխանեն մեկ հարցի՝ ի՞նչ են իրենք ուզում: Նրանք իսկական ընտրություննե՞ր են ուզում, թե՞ ուղղակի ուզում են փոխարինել ինձ: Կարծում եմ՝ ռուսներն ուղղակի ուզում են փոխարինել ինձ: Եւ դրա համար կա քաղաքակիրթ ճանապարհ՝ ընտրությունները»,- նշել է նա:

Զելենսկին ընդգծել է, որ չէր արգելափակի ԱՄՆ-ի կողմից ընտրությունների անցկացման վերաբերյալ որոշակի առաջարկները, եթե Վաշինգտոնը կարողանա խաղաղություն հաստատել Ուկրաինայում:

«Եթե մենք երկամսյա հրադադար ստանանք ընտրություններ անցկացնելու համար, ես կանեմ ամեն ինչ, որպեսզի խոսեմ խորհրդարանի հետ եւ նրանց համոզեմ հասկանալ, որ նրանք չեն աջակցում, եւ նույնիսկ ժողովուրդը չի աջակցում, պատերազմի ժամանակ ընտրությունների անցկացմանը: Նույնիսկ եթե դուք երկամսյա հրադադար ստանաք, դա չի նշանակում, որ պատերազմն ավարտվել է»,- բացատրել է նա:

Միեւնույն ժամանակ Զելենսկին ընդգծել է, որ դրա համար մարդիկ պետք է իրենց կարծիքն արտահայտեն խաղաղության վերաբերյալ հանրաքվեում, իսկ խորհրդարանը փոփոխություններ կատարի գործող օրենսդրության մեջ:

ԱՄՆ–Ն ԱՓՍՈՍՈՒՄ Է

ԱՄՆ վարչակազմն ափսոսում է, որ Վատիկանը հրաժարվել է մասնակցել Գազայի հատվածում իրադրության կարգավորման համար ստեղծված Խաղաղության խորհրդի աշխատանքներին: Այս մասին հայտարարել է Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լեւիթը մամուլի ասուլիսում, որի տեսանյութը տարածել է The Associated Press գործակալությունը:

«Կարծում եմ՝ դա խորին ափսոսանք է հարուցում.... Անշուշտ, վարչակազմը ցանկանում է, որ Խաղաղության խորհրդին բոլոր հրավիրվածները մասնակցեն դրան, որովհետեւ Խաղաղության խորհուրդը վերահսկում է այն հատվածի վերակառուցումը, որտեղ չափազանց երկար ժամանակ եղել է բռնություն, արյունահեղություն, աղքատություն: Նախագահը շատ խիզախ եւ հավակնոտ ծրագիր եւ տեսլական ունի՝ վերակառուցելու Գազայի հատվածը», - ասել է նա՝ մեկնաբանելով Սուրբ Աթոռի որոշումը:

Լեւիթը հավելել է, որ Խաղաղության խորհուրդն օրինական կազմակերպություն է, որի կազմի մեջ են մտնում տասնյակ երկրներ: «Եւ մենք կարծում ենք, որ այդ որոշումն ափսոսանք է առաջացնում», - ընդգծել է նա:

Լեւիթը նաեւ ասել է, որ հարկ չկա քաղաքականացնելու այն հարցերը, որոնք վերաբերում են խաղաղության հաստատմանն ու պահպանմանը:

Սուրբ Աթոռի որոշման մասին ավելի վաղ հայտարարել էր Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պիետրո Պարոլինը: Նա նշել էր, որ կան հանգամանքներ, որոնք փոքր-ինչ «տարակուսանքի մեջ են գցում, որոշ կրիտիկական հարցեր, որոնք պարզաբանում են պահանջում»:

ՋՈՐՔԸ ԴՈՒՐՍ ԿԲԵՐԻ

ԱՄՆ-ն պլանավորում է Սիրիայից դուրս բերել բոլոր ամերիկացի զինծառայողներին՝ մոտավորապես 1000 մարդու: Այս մասին հաղորդում է Wall Street Journal-ը՝ վկայակոչելով աղբյուրների:

Թերթի զրուցակիցների խոսքով՝ ամերիկացի զինվորականները Սիրիան կլքեն առաջիկա երկու ամսվա ընթացքում:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ ԱՄՆ զինվորականները դուրս են եկել Սիրիայի հյուսիսարեւելյան ալ-Հասաքեի նահանգում գտնվող իրենց գլխավոր ալ-Շադադի բազայից: Օբյեկտը զբաղեցրել է սիրիական բանակը. բազայի նկատմամբ վերահսկողության փոխանցումը տեղի է ունեցել ամերիկյան կողմի հետ համակարգված: Նաեւ անցյալ շաբաթ ամերիկացիները դուրս են եկել Սիրիայի հարավում գտնվող աթ-Թանֆ բազայից:

2025 թ. ապրիլին The New York Times թերթը հաղորդել էր, որ ԱՄՆ-ն սկսել է կրճատել Սիրիայում իր զորակազմի թվաքանակը: Զինվորականները պլանավորում էին փակել երկրի հյուսիս-արեւելքում գտնվող ութ բազաներից երեքը՝ զորքերի թիվը 2000-ից կրճատելով մինչեւ 1400: Միեւնույն ժամանակ, տեղում գտնվող ամերիկյան հրամանատարությունը խորհուրդ է տվել «Սիրիայում թողնել առնվազն 500 ամերիկացի զինվորական»:

ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԿՐԱԿՈՑՆԵՐ

Փետրվարի 18-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ մայրաքաղաքի Աջափնյակ վարչական շրջանի բակերից մեկում վիճաբանություն է, եւ կրակոցի ձայներ են լսվել:

Դեպքի վայր են մեկնել ՆԳՆ ոստիկանության եւ Քննչական կոմիտեի ծառայողներ: Պարզվել է, որ դանակահարված եւ հրազենային վնասվածքներով անձինք կան, որոնք տեղափոխվել են բժշկական կենտրոններ: Նրանցից մեկը՝ 45-ամյա Ա. Վ.-ն, հիվանդանոցում մահացել է:

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Աջափնյակում հնչած աղմկահարույց կրակոցների հետեւանքով սպանվածը 45-ամյա Արսեն Վարդանյանն է: Վերջինս ռեստորանում էր երգում:

Իրավապահների ձեռնարկած անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է դեպքի մասնակից անձանց ողջ շրջանակը. ձեռնարկվում են միջոցառումներ նրանց հայտնաբերելու ուղղությամբ: Կազմված փաստաթղթերն ուղարկվում են նախաքննական մարմին:

Երեւան քաղաքի քննչական վարչությունում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 8-րդ կետերի (սպանության փորձը), 155-րդ հոդվածի (սպանությունը), 297-րդ հոդվածի 3-րդ մասի (խուլիգանությունը) եւ 335-րդ հոդվածի 1-ին մասի (հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը) հատկանիշներով: Կատարվում են անհետաձգելի քննչական գործողություններ:

Հնչած կրակոցների հետեւանքով ողջ իրավապահ համակարգը կոնկրետ անձանց բնակարաններում խուզարկություններ է սկսել: Միջադեպի մասնակիցների բնակարաններում իրականացվում են քննչական գործողություններ:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս պահին ՀՀ քննչական կոմիտեում միջադեպի մասնակիցների մասով քննչական գործողություններ են իրականացվում, հարցաքննվում են կոնկրետ անձինք:

Shamshynan.com-ն էլ հայտնեց, որ վիրավորներն են՝ Երեւանի բնակիչներ 39-ամյա Էդգար Ենոքյանը, 18-ամյա Ներսես Սահակյանը, 42-ամյա Հայկ Աբելյանը, Շիրակի մարզի բնակիչ 31-ամյա Ստեփան Մկրտչյանը, Երեւանի բնակիչներ 24-ամյա Արմեն Հակոբյանը, 32-ամյա Դավիթ Զաքարյանը եւ 41-ամյա Գագիկ Սարգսյանը: Մասնակից մյուս անձանց ինքնությունները այս պահին պարզվում են: Նախաքննության շահերից ելնելով՝ որոշ հանգամանքներ այս պահին չենք հայտնում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԾԵԾԿՌՏՈՒՔ ՌԵՍՏՈՐԱՆԻ ԴԻՄԱՑ

Փետրվարի 15-ին վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 01:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Նոր Նորքի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Բագրեւանդ փողոց 102 հասցեում գտնվող «Ռոյալ Երեւան» ռեստորանի դիմաց ծեծկռտուք է տեղի ունենում:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Բադալյանի եւ գումարտակի հրամանատարի տեղակալ Կարեն Ավետիսյանի գլխավորությամբ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ պարեկները նշված հասցեից խուլիգանություն կատարելու համար ձերբակալել եւ ոստիկանության Նոր Նորքի բաժին են տեղափոխել Կոտայքի մարզի բնակիչ 39-ամյա Արթուր Հ.-ին, Երեւանի բնակիչներ 23-ամյա Սերգեյ Ս.-ին, 20-ամյա Հարութ Մ.-ին, 22-ամյա Ֆելիքս Կ.-ին, 23-ամյա Արման Ա.-ին, 40-ամյա Յանիս Ա.-ին եւ 46-ամյա Վադիմ Հ.-ին, որտեղ պարզվել է, որ Յանիս Ա.-ն եւ Վադիմ Հ.-ն վիճաբանել են Հարութ Մ.-ի, Արթուր Հ.-ի, Սերգեյ Ս.-ի, Ֆելիքս Կ.-ի եւ Արման Ա.-ի հետ, ինչի ժամանակ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը միմյանց հասցեներին հայհոյանքներ են հնչեցրել եւ քաշքշել:

Դեպքի փաստով ոստիկանության Նոր Նորքի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

1 ԿԳ 150 ԳՐԱՄ ԹՄՐԱՆՅՈՒԹ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Աբովյան քաղաքի մի բնակիչ իրացման նպատակով ձեռք է բերելու մաքսանենգ ճանապարհով Հայաստան ներկրված խոշոր չափերի թմրանյութ:

Տեղեկությունն իրացվել է փետրվարի 11-ին: Համագործակցելով Կոտայքի մարզի պարեկների հետ՝ քրեական ոստիկանները Երեւան-Աշտարակ ավտոճանապարհին ձերբակալեցին 29-ամյա աբովյանցուն եւ «Օպել» մակնիշի մեքենայով հանդերձ տեղափոխեցին Համայնքային ոստիկանության Դավթաշենի բաժին: Տղամարդը հայտնել է, որ իր վերցրած թմրամիջոցի փաթեթը մեքենայի մեջ է:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում «Օպելի» խուզարկությամբ հայտնաբերվել է մեկ կիլոգրամ 150 գրամ մարիխուանա: Տղամարդը կալանավորվել է: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՁԵՆՔ-ՁԻՆԱՄԹԵՐՔ

Քրեական ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությունում փետրվարի 16-ին օպերատիվ տեղեկություն էր ստացվել, որ Ծովասար գյուղի 33-ամյա բնակիչը ապօրինի ինքնաձիգ է պահում: Վարչություն հրավիրված երիտասարդը բացատրական աշխատանքի արդյունքում հայտնել է, որ տեղեկությունը հավաստի է: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 33-ամյա ծովասարցու առանձնատան տանիքում հայտնաբերվել է «ԱԿՍ» տիպի ինքնաձիգ եւ պահեստատուփ:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Փետրվարի 16-ին՝ ժամը 16:40-ին, ՆԳՆ ոստիկանության Արարատի մարզի օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել էր, որ Հովտաշատ գյուղում իր «Մերսեդես» մակնիշի մեքենայից գողացել են 1 միլիոն 180 հազար դրամ: Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ գողությունը կատարել է Հովտաշատ գյուղի 46-ամյա բնակիչը: Նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Բացատրական աշխատանքների արդյունքում 46-ամյա տղամարդը խոստովանել է արարքը եւ հայտնել, որ գումարը թաքցրել է տանը: Համայնքային ոստիկանները պարզել են նաեւ, որ նա տանը թմրամիջոց է պահում: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 46-ամյա տղամարդու բնակության հասցեում հայտնաբերվել են 1 միլիոն 120 հազար դրամ, մարիխուանա տեսակի թմրամիջոց եւ ինքնաձիգի փամփուշտներ:

ԹՄՐԱՄԻՋՈՑ

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողները փետրվարի 13-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Ամբերդ գյուղի 61-ամյա բնակիչը պահում եւ օգտագործում է թմրամիջոց: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 61-ամյա տղամարդու տան տանիքում հայտնաբերվել է 3կգ 550 գրամ կանեփանման չորացված զանգված, իսկ նկուղում՝ թմրամիջոցի նմանվող զանգվածով 11 փաթեթ՝ ընդհանուր 120,8 գրամ քաշով:

ԱՊՕՐԻՆԻ

Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Էջմիածին քաղաքի 67-ամյա բնակիչը առանց համապատասխան թույլտվության պատրաստում եւ իրացնում է ալկոհոլային խմիչքներ: Տեղեկությունը ստուգելու նպատակով համայնքային ոստիկաններն այցելել են տղամարդու բնակության հասցե: Բացատրական աշխատանքի արդյունքում տանտերը հայտնել է, որ ոստիկանների տեղեկությունը հավաստի է: Ապօրինի ձեռնարկատիրության փաստով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 67-ամյա տղամարդու՝ Անդրանիկի փողոցում գտնվող տան նկուղում հայտնաբերվել են տարբեր տարողությամբ տարաների մեջ լցված 1680 լիտր գինի եւ 411 լիտր օղի:

● *Հանրապետությունում փետրվարի 17-ից 18-ը, ըստ ոստիկանության տվյալների, հայտնաբերվել է 10 հետախուզվող եւ 1 անհետ կորած:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄՏԱՀՈԳՎԱԾ ԵՆ

Նոյեմբերյան համայնքի Ջուջեւան գյուղի բնակիչները մտահոգված են, որ այս տարվա սեպտեմբերի 1-ից՝ նոր ուսումնական տարվա սկզբից, Ջուջեւանի միջնակարգ դպրոցը կդադարի գործելուց: Ջուջեւան գյուղի դպրոցը հիմնադրվել է 1923 թ., այն ավելի քան 100 տարեկան է: Դպրոցն այժմ ունի 53 աշակերտ: Ջուջեւանի բնակիչներն ասում են, որ գյուղի դպրոցն ընդգրկվել է Հայաստանի այն 234 պետական հանրակրթական դպրոցների շարքում, որոնք առաջիկայում փակվելու են: Ջուջեւանը Նոյեմբերյան քաղաքից հեռու է մոտ 10 կիլոմետր, գյուղի դպրոցի փակման դեպքում ջուջեւանցի աշակերտները որոշակի դժվարություններ են ունենալու Նոյեմբերյան քաղաքի դպրոցներ հաճախելու համար:

Ջուջեւան գյուղի բնակիչ Սմբատ Պետրոսյանը գյուղի դպրոցի փակման վերաբերյալ ասում է. «Թղթի վրա սա կարող է թվալ պարզապես վարչական որոշում, բայց գյուղի համար սա շատ ավելին է, քան մի շենքի դռների փակվելը: Դպրոցը գյուղի սիրտն է: Այնտեղ են առաջին զանգի հուզմունքը, վերջին զանգի արցունքները, մանկական ծիծաղը, ուսուցիչների նվիրումն ու ծնողների հույսը: Դպրոցը միայն կրթություն չի տալիս. այն պահում է գյուղի շունչը, հավատը, վաղվա օրվա հանդեպ վստահությունը: Երբ գյուղում դպրոցը փակվում է, փակվում է նաեւ ընտանիքների մի մասի հույսը՝ այստեղ մնալու: Երեխաները ստիպված են լինելու ամեն օր այլ բնակավայր գնալ, ծնողները՝ մտածել տեղափոխվելու մասին: Իսկ շատերի համար այդ «տեղափոխվելը» կարող է դառնալ արտագաղթ: Գյուղը առանց դպրոցի դանդաղ մարում է: Երիտասարդ ընտանիքները դժվարությամբ են որոշում այստեղ ապրել, եթե իրենց երեխաների կրթության հարցը անորոշ է: Իսկ երբ երեխաների ձայները լռում են, գյուղը սկսում է դատարկվել: Ջուջեւանի դպրոցի փակումը միայն կրթական հարց չէ. սա բնակավայրի ապագայի հարց է: Սա մարդկանց մնալու կամ հեռանալու որոշման վրա ազդող ծանր հանգամանք է: Հուսանք՝ դեռ կգտնվեն լուծումներ, որոնք թույլ կտան պահպանել ոչ միայն դպրոցի շենքը, այլեւ Ջուջեւանի կյանքի զարկերակը»:

2025թ. դեկտեմբերի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «2026 թվականին Հայաստանում փակվելիք 234 հանրակրթական դպրոցներից քանի՞սն է Տավուշի մարզում, ո՞ր դպրոցներն են դրանք, ինչպե՞ս է լուծվելու այդ դպրոցների աշակերտների՝ այլ բնակավայրերի դպրոցներ ամենօրյա տեղափոխության հարցը»: Մարզպետարանի աշխատակազմից պատասխանել են. «Դպրոցների փակվելու վերաբերյալ որոշում առկա չէ»:

Իհարկե, ուսումնական տարվա կեսին ինչո՞ւ պետք է դպրոցների փակման որոշում ընդունվեր: Սակայն Տավուշի մարզպետը չի հերքել, որ դպրոցներ են փակվելու: Հավանաբար, այդ դպրոցները կփակվեն այս ուսումնական տարվա ավարտից, հունիսի 7-ին կայանալիք ԱԺ ընտրություններից հետո: Ընտրություններից առաջ հանրակրթական դպրոցների փակման մասին որոշումը կարող է ՔՊ կուսակցությանը զրկել փակվող դպրոցների աշակերտների ծնողների քվեներից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ՆԵՐԽՈՒԺԵԼ ԷԻՆ ԱԺ ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ

2025 թվականի հունվարին Անի Սամսոնյանի կողմից ՀՀ դատախազություն ներկայացրած հաղորդման հիմքով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 196.1. -ի 1-ին մասով (հետամտելը): Այս մասին ArmLur.am-ին հայտնեցին գլխավոր դատախազությունից:

Փետրվարի 18-ին ներկայացրած հաղորդման հիմքով եւս նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով խուլիգանություն):

Կատարվում է նախաքննություն մեկ վարույթի շրջանակում:

Հիշեցնենք, որ փետրվարի 18-ին ներխուժել էին ԱԺ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի աշխատասենյակ: Այս մասին նա հայտնել էր Facebook-ի իր էջում: Նա, մասնավորապես, նշել էր. «Հայաստանի իրավապահ համակարգի դեկորատիվ փայլն ու «օպերատիվ» պաշտպանությունը: Դեռեւս հունվարին հաղորդում եմ ներկայացրել ՀՀ դատախազություն ինձ՝ հետամտելու եւ խուլիգանության (այդ թվում քաղաքական բնույթով) համար:

Ութ ամիս շարունակ համբերելուց հետո, երբ հասկացա, որ հետապնդումները վտանգավոր բնույթ են ստանում, որոշեցի որպես օրինապահ քաղաքացի չդիմել այլ միջոցների եւ պաշտպանություն փնտրել հայրենի իրավապահ համակարգում: Մինչեւ այսօր որեւէ քայլ չի ձեռնարկվել, իսկ բանը հասավ նրան, որ այսօր տվյալ անձը ներխուժել է իմ աշխատավայր եւ ես ստիպված եմ եղել դիմել ինքնապաշտպանության: Գրեթե վստահ եմ, քաղաքական ստատուսի համար ինձ պատժելու դեպքում իրավապահ համակարգը մեկ րոպե չէր կորցնի: Հետո ասում եք՝ ինչի են մարդիկ դիմում ինքնադաստանի ու չեն վստահում իրավապահներին»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԳՏՈՒՄ

Չինաստանի եւ ԱՄՆ-ի ժողովուրդների ձգտումը՝ունենալ միմյանց հետ փոխանակումներ ու համագործակցություն, անփոփոխ կմնա՝ անկախ նրանից, թե ինչպես կզարգանան երկկողմ հարաբերությունները: Այս մասին տեղեկանում ենք Reuters գործակալությունից, այս մասին հայտարարել է Չինաստանի նախագահ Սի Ծինփինն ԱՄՆ-ի Այովայի նահանգի իր բարեկամներին հղած ուղերձում:

«ԱՄՆ-Չինաստան հարաբերությունների հույսը ժողովուրդներն են», - գրել է նա՝ ի պատասխան չինական Նոր տարվա առթիվ այովացի գործարար Լուկա Բերոնի շնորհավորանքի:

Սի Ծինփինը նաեւ հույս է հայտնել, որ Այովա նահանգի իր բարեկամները կշարունակեն նպաստել երկու ժողովուրդների եւ երկու երկրների միջեւ բարեկամության ամրապնդմանը եւ ավելի մեծ ներդրում ունենալ չին-ամերիկյան հարաբերությունների զարգացման գործում:

Ապրիլին սպասվում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի այցը Չինաստան, որից հետո՝տարվա վերջում, Թրամփի խոսքով, Սի Ծինփինը կայցելի ԱՄՆ:

ՊԱՇՏՈՆԱՆԿ Է ԱՐՎԵԼ

Պերուի Կոնգրեսը քվեարկել է ժամանակավոր նախագահ Խոսե Խերիի պաշտոնանկության օգտին՝ նրա նկատմամբ կոռուպցիայի եւ ազդեցության չարաշահման շուրջ հետաքննության պատճառով: Որոշումն ընդունվել է, երբ ընտրություններին երկու ամսից էլ պակաս ժամանակ է մնացել: Այս մասին հաղորդում է The Associated Press գործակալությունը:

Խորհրդարանի տվյալներով՝ Խերիի պաշտոնանկության օգտին քվեարկել է 75 պատգամավոր, 24-ը դեմ է հանդես եկել, ձեռնպահ է մնացել երեք պատգամավոր:

Խերին պաշտոնը զբաղեցնում է 2025 թ. հոկտեմբերի 10-ից՝հանցավորության աճի ֆոնին նախագահ Դինա Բոլուարտեի պաշտոնանկությունից հետո: Բոլուարտեի հեռանալը դարձել է երկարատեւ քաղաքական ճգնաժամի հերթական դրվագը. 2016 թվականից ի վեր երկրում փոխվել է յոթ նախագահ:

Խորհրդարանը պետք է պատգամավորներից ընտրի նոր ժամանակավոր նախագահ, որն իր պարտականությունները կկատարի մինչեւ հուլիսի 28-ը, երբ իշխանությունը կփոխանցվի ապրիլի 12-ի ընտրությունների հաղթողին: Խերին ինքը աշխատանքի կվերադառնա Կոնգրես՝մինչեւ ներկայիս գումարման լիազորությունների ավարտը:

Ժամանակավոր առաջնորդի թեկնածության շուրջ քվեարկությունը տեղի կունենա փետրվարի 18-ին, երբ օրենսդիրները գրանցեն իրենց թեկնածուներին:

ԲԱՑՎԵԼ Է

Ուրուգվայի Մալդոնադո նահանգի Պունտա դել Էստե քաղաքում բացվել է Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոսությունը:

Ինչպես հայտնում է Ուրուգվայում ՀՀ դեսպանությունը, պաշտոնական արարողությանը հաջորդել է պատվավոր հյուպատոս Վիլդեր Անանիկյանի կողմից կազմակերպված ընդունելությունը:

Դեսպանության փոխանցմամբ՝ միջոցառմանը ներկա են գտնվել Ուրուգվայի նախկին նախագահ Լուիս Ալբերտո Լակաժե Էռեռան, Պունտա դել Էստեի քաղաքապետ Խավիեր Կարբաժալը, Ինտեգրացիայի լատինամերիկյան ասոցիացիայի գլխավոր քարտուղար Սերխիո Աբրեուն, Բոլիվիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս Մարսելո Օրտուստե Գոնսալեսը, խորհրդարանականներ, մի շարք երկրների պատվավոր հյուպատոսներ, հասարակական գործիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ուրուգվայում Հայաստանի Հանրապետության դեսպան Մարիամ Գեւորգյանն իր ելույթում կարեւորել է Ուրուգվայի առավել զարգացած եւ զբոսաշրջային կենտրոններից մեկում Հայաստանի պատվավոր հյուպատոսության բացումը՝ ընդգծելով, որ այն կարեւոր կամուրջ կդառնա երկու երկրների միջեւ եւ խթան կհանդիսանա առեւտրատնտեսական, մշակութային, կրթական ու զբոսաշրջային համագործակցության ընդլայնման համար:

Նշվում է, որ ելույթներով են հանդես եկել նաեւ Պունտա դել Էստեի քաղաքապետ Խավիեր Կարբաժալը եւ պատվավոր հյուպատոս Վիլդեր Անանիկյանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 17-ից 18-ը հայտնաբերվել է 19 դեպք՝ թմրանյութի եւ 12 դեպք՝ խարդախության:*

ԱՇԽԱՐՀ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ

Էստոնիան պատրաստ է անհրաժեշտության դեպքում իր տարածքում տեղակայել ՆԱՏՕ-ի դաշնակիցների միջուկային զենքը: Այս մասին հայտարարել է Էստոնիայի արտաքին գործերի նախարար Մարգուս Ցախնան, ինչպես մեջբերում է ERR-ը: «Մենք դեմ չենք մեր տարածքում միջուկային զենքի տեղակայմանը: Մենք չունենք որեւէ դոկտրին, որը կբացառի դա, եթե ՆԱՏՕ-ն անհրաժեշտ համարի, մեր պաշտպանական ծրագրերի համաձայն, մեր տարածքում տեղակայել, օրինակ, միջուկային զենք»,-ասել է նա:

Էստոնիան չունի սեփական միջուկային զենք:

2025 թվականի սեպտեմբերին Էստոնիայի պաշտպանության նախարար Հաննո Պեւկուրը հայտարարել է, որ Էստոնիան պատրաստ է իր տարածքում տեղակայել միջուկային մարտագլխիկներ կրելու ունակ բրիտանական կործանիչներ:

Bloomberg-ը նախկինում հայտնել էր, որ եվրոպական երկրները Սառը պատերազմի ավարտից ի վեր առաջին անգամ քննարկում են սեփական միջուկային պաշտպանության համակարգի ստեղծման հարցը, քանի որ Միացյալ Նահանգները այլեւս հուսալի ռազմական գործընկեր չէ: Եվրոպան ներկայումս պաշտպանված է ԱՄՆ «միջուկային հովանոցի» կողմից, որը բաղկացած է մայրցամաքում տեղակայված ամերիկյան զենքից: Միայն Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան ունեն սեփական միջուկային զենք:

Լեհաստանի նախագահ Կարոլ Նավրոցկին փետրվարի 15-ին հայտարարել է, որ երկիրը պետք է հետամուտ լինի սեփական միջուկային զենքի մշակմանը: Պատասխանելով Մոսկվայի հնարավոր գործողությունների մասին հարցին, եթե Լեհաստանը սկսի աշխատանքները միջուկային ծրագրի վրա, Նավրոցկին ասել է, որ «Ռուսաստանը կարող է ագրեսիվ արձագանքել ցանկացած բանի»:

ԱՅՑԵԼԵԼ Է

Դանիայի թագավոր Ֆրեդերիկ X-ը ընթացիկ տարում արդեն երկրորդ անգամ այցելել է Նուուկ՝ Գրենլանդիայի մայրաքաղաք: Այս մասին հայտնում է Reuters գործակալությունը:

Գործակալության տվյալներով՝ Դանիայի թագավորը այցի ընթացքում կրել է սեւ փետուրե բաճկոն՝ ձախ կրծքին Դանիայի եւ Գրենլանդիայի դրոշների պատկերներով: Նշվում է, որ թագավոր Ֆրեդերիկ X-ին օդանավակայանում դիմավորել են Գրենլանդիայի վարչապետ Յենս-Ֆրեդերիկ Նիլսենը եւ խորհրդարանի խոսնակ Կիմ Քիլսենը:

Գրենլանդիան Դանիայի թագավորության մաս է կազմում:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը բազմիցս հայտարարել է, որ կղզին պետք է դառնա Միացյալ Նահանգների մաս: Դանիայի եւ Գրենլանդիայի առաջնորդները, իրենց հերթին, զգուշացրել են ամերիկյան իշխանություններին կղզու բռնագրավման հետ կապված՝ նշելով, որ ակնկալում են, որ Միացյալ Նահանգները կհարգեն թագավորության տարածքային ամբողջականությունը:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

ՆՈՐ «ԲԻԶՆԵՍ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Փետրվարի 18-ին Տիգրան Մեծ 16/12 հասցեում Արդշինբանկը պատշտոնապես բացեց իր նոր՝ «Արդշինբանկ Բիզնես» մասնաճյուղը: Սա մասնագիտացված գրասենյակ է, որը սպասարկելու է փոքր եւ միջին բիզնեսին:

Արդշինբանկի վարչության անդամ, ՓՄՁ բիզնեսի տնօրեն Արամ Փինաջյանը նշեց, որ սա հերթական կարեւոր քայլն է բանկի շարունակական զարգացման ճանապարհին, որի նպատակն է հաճախորդներին իրենց կարիքներին համապատասխան, մասնագիտացված ծառայություններ մատուցել:

Մասնաճյուղը հնարավորություն կտա ավելի հարմարավետ պայմաններում կազմակերպել փոքր եւ միջին ձեռնարկությունների սպասարկման գործընթացը՝ նրանց առաջարկելով մատչելի, ճկուն եւ անհատականացված բանկային պրոդուկտներ, այդ թվում՝ վարկային ծառայություններ, վճարային գործիքներ, POS տերմինալներ, միջազգային բանկային քարտեր եւ այլն:

«Արդշինբանկի բիզնես մասնաճյուղը կհետաքրքրի այն ընկերություններին, որոնք ֆինանսավորման ավելի ճկուն մեխանիզմներ եւ գրավիչ տոկոսադրույքներ փնտրելուց բացի, կցանկանան վարկավորման ողջ գործընթացի ընթացքում

օգտվել խորհրդատվական եւ իրավաբանական աջակցության ծառայությունից: Մեր մասնագետները կօգնեն ավելի արդյունավետ կառավարել դրամական հոսքերը՝ վերջիններս ուղղելով բիզնեսի աճին: ՓՄՁ սեգմենտը կարեւոր է մեզ համար, ահա թե ինչու մենք անընդհատ աշխատում ենք ձեռնարկատերերին առաջարկվող ծառայությունների շարքի ընդլայնման ուղղությամբ. առաջարկում ենք ֆինանսական ռեսուրսներ բիզնեսի ընդլայնման եւ զարգացման համար, ինչպես նաեւ կարճաժամկետ եւ երկարաժամկետ վարկավորում՝ հարմարեցված ՓՄՁ-ների կարիքներին եւ առանձնահատկություններին»,-ընդգծեց Արամ Փինաջյանը:

Հիշեցնենք, որ Արդշինբանկը ՓՄՁ վարկեր է տրամադրում ինչպես բանկի սեփական միջոցների հաշվին, այնպես էլ միջազգային ծրագրերի միջոցով: Վարկերը տրամադրվում են դրամով եւ արտարժույթով: Վարկային ֆինանսավորումը նախատեսված է հիմնական եւ շրջանառու միջոցների ձեռքբերման, կրեդիտորական պարտքի մարման համար՝ ներառյալ վերաֆինանսավորումը եւ այլն: Որոշ վարկային ծառայություններ հատուկ մշակված են արտահանողներին եւ ներմուծողներին օգնելու ընթացիկ իրացվելիության խնդիրների, մաքսային ձեւակերպումների, հարկային համապատասխանության եւ աշխատակիցների աշխատավարձերի վճարման հարցերում: Վարկառուներին առաջարկվում է մինչեւ 12 ամիս արտոնյալ ժամանակահատված, բացի այդ, հաշվի առնելով բիզնեսների սեզոնայնությունը՝ բանկը հաճախորդների համար մշակում է մայր գումարի անհատականացված մարման ժամանակացույց:

Արդշինբանկի Բիզնես մասնաճյուղը գտնվում է Երեւան, Տիգրան Մեծ պողոտա 16/12 հասցեում:

Հեռ.՝ +374 12 22 22 22: Աշխատանքային ժամեր՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը 9:15-ից մինչեւ 16:45:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԲԱՆԿԵՐ

ՖԱՍԹ ԲԱՆԿԻ ՄՐՑԱՆԱԿԸ

Ֆասթ Բանկն օրերս Mastercard միջազգային վճարային համակարգի տարեկան միջոցառմանն արժանացել է գերազանցության մրցանակի մասշտաբային վճարային լուծումների համար՝ «Excellence in Scaling Payment Solutions»: Միջազգային համակարգի գործընկերները բարձր են գնահատել Ֆասթ Բանկի հետ համագործակցությունն ու զարգացման ներուժը:

Ստացված մրցանակն արտացոլում է Ֆասթ Բանկի արդյունավետ եւ շարունակական աշխատանքները վճարային տեխնոլոգիաներն ընդլայնելու, դրանք թվայնացնելու եւ հաճախորդներին առավել հասանելի դարձնելու ուղղությամբ: Ի դեպ, Ֆասթ Բանկն ու Mastercard միջազգային վճարային համակարգն ամփոփել են գործակցության 3 տարին: Այս պահին Բանկը թողարկում է պրեմիում տեսակի երկու ԱկնՔարտ՝ Master World եւ Master World Elite որոնք հասցրել են քարտապանների մեծ համայնք ձեւավորել:

Ընդգծենք որ Fast Bank Mobile հավելվածում ու առցանց բանկինգում իրականացվել են մի շարք նոր բարելավումներ, որոնք հնարավորություն են տալիս բազմաթիվ ֆինանսական գործողություններ իրականացնել թվային եղանակով՝ դարձնելով դրանք ավելի արագ, հարմար եւ ժամանակ խնայող հաճախորդների համար:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿԸ ՄԻԱՑԵԼ Է

Կարեւորելով լիզինգային ֆինանսավորման զարգացումը՝ Հայէկոնոմբանկը հաստատուն քայլեր է ձեռնարկում լիզինգի շուկայում:

Բանկն անդամակցել է ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիային՝ խթանելու Հայաստանում զարգացող, վստահելի եւ մրցունակ լիզինգային միջավայր ստեղծելու ջանքերը:

Լիզինգատուների Ասոցիացիան մեծ դեր ունի Հայաստանում լիզինգի ոլորտում օրենսդրական բարեփոխումների խթանման, մասնագիտական կարողությունների զարգացման, միջազգային չափորոշիչների տարածման եւ հանրային իրազեկման գործում:

Հայէկոնոմբանկի Լիզինգի տրամադրման բաժնի պետ Լեւոն Աղաջանյանը նշում է. «Հայէկոնոմբանկը, որպես լիզինգային շուկայի համեմատաբար նոր մասնակից, մեծապես կարեւորում է անդամակցությունը ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիային: Այս համագործակցությունը հարթակ է գործընկեր ֆինանսական կառույցների հետ արդյունավետ երկխոսության եւ «առաջին ձեռքից» տեղեկատվության փոխանակման համար: Ասոցիացիան կարեւոր դերակատարություն ունի Հայաստանում ոլորտային

օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաեւ միջազգային փորձն ու նորարարությունը Հայաստանում հանրայնացնելու գործում: Մեզ համար լիզինգի զարգացումն առաջնահերթ ուղղություն է, եւ այդ համատեքստում նոր եւ բազմակողմ գործընկերությունների հաստատումը կարեւոր նշանակություն ունի»:

Իր հերթին, ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիայի նախագահ Արսեն Բազիկյանն ընդգծում է. «Ասոցիացիան բաց եւ համագործակցային հարթակ է, որի նպատակն է նպաստել լիզինգային շուկայի թափանցիկ եւ կայուն զարգացմանը: Մենք կարեւորում ենք նոր մասնակիցների մուտքը շուկա, քանի որ դա խթանում է մրցակցությունը, նորարարական ֆինանսական լուծումների ձեւավորումը եւ բիզնեսների համար ֆինանսավորման հասանելիության ընդլայնումը»:

Հիշեցնենք, որ Հայէկոնոմբանկը շուկայում ներկայացնում է AEB-Leasing պրոդուկտը, որի շրջանակում անհատներին եւ բիզնեսին առաջարկվում է ներգրավել լիզինգային ֆինանսավորում բիզնեսի արդիականացման համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՆՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ ՀԵՏԱՁԳՈՒՄԸ

«ԵՎՐԱՏԵՍԻԼ»-Ի ԱՌԱՋԻՆ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Եվրատեսիլ»-ի առաջին համերգային շրջագայության անորոշ ժամանակով հետաձգումը, որը համընկնում էր մրցույթի 70-ամյակի հետ, առցանց բողոքի ալիք է բարձրացրել աշխարհի ամենամեծ երգի մրցույթի երկրպագուների շրջանում:

Ինչպես տեղեկանում ենք EwroNews-ից՝ չեղարկման վերաբերյալ արձագանքները տատանվում էին հիասթափությունից եւ հուսահատությունից մինչեւ, ոմանց համար, տոնակատարության պատճառ, բայց առցանց հիմնական թեմաներից մեկը շրջագայության տոմսերի գինն էր:

X օգտատերերից մեկը գրել է. «Հետաքրքիր է, թե «անկանխատեսելի բարդությունները» սարսափելի կազմի եւ 200 ֆունտ ստեռլինգ արժողությամբ տոմսերի հետեւանքն են»:

Պաշտոնական հայտարարության տակ գտնվող մեկնաբանությունների բաժինը լի էր հարյուրավոր նմանատիպ հաղորդագրություններով, որոնք արտահայտում էին վրդովմունք գների եւ, ակնհայտորեն, տոմսերի չափազանց թույլ պահանջարկի վերաբերյալ:

«Մենք անսպասելի բարդությունների հանդիպեցինք = ոչ ոք չգնեց ծիծաղելիորեն թանկ տոմսերը», - գրել է մեկ այլ օգտատեր:

Շրջագայության չեղարկման օրը «Եվրատեսիլ»-ի լրագրող Ջ. Ջ. Կույմանը հրապարակեց մի քանի վայրերի տեղերի ցանկերը, որտեղ հազարավոր տոմսեր դեռ վաճառվում էին:

Շրջագայությունը սկզբնապես նախատեսված էր 2026 թվականի ամռանը՝ տասը խոշոր եվրոպական քաղաքներում, այդ թվում՝ Լոնդոնում, Միլանում, Ամստերդամում, Փարիզում եւ Ստոկհոլմում համերգներով:

Որոշ օգտատերեր նաեւ նմանություններ են նկատել «Եվրատեսիլ»-ի համերգային շրջագայության եւ Het Groote Songfestivalfeest-ի՝ Ամստերդամի մեկ այլ միջոցառման միջեւ, որին մասնակցում են բացառապես «Եվրատեսիլ»-ի արտիստներ:

Չնայած Նիդեռլանդների կողմից գլխավոր մրցույթի շարունակական բոյկոտին, շրջագայության շրջանակներում նախատեսված էր նաեւ համերգ Նիդեռլանդների մայրաքաղաքում: Հրապարակման պահին Իսպանիան, Նիդեռլանդները, Սլովենիան, Իսլանդիան եւ Իռլանդիան արդեն հայտարարել էին, որ չեն մասնակցի «Եվրատեսիլ»-ին՝ Իսրայելի մասնակցության նկատմամբ էթիկական առարկությունների պատճառով՝ հաշվի առնելով նրա դերը Գազայի հատվածի պատերազմում:

Շրջագայության չեղարկման արձագանքը «Եվրատեսիլ»-ի կազմակերպիչների առջեւ ծառացած մարտահրավերների շարքում վերջինն է, քանի որ մրցույթի 70-րդ թողարկման նախապատրաստական աշխատանքները լիարժեք ընթացքի մեջ են:

Միեւնույն ժամանակ, BBC-ն հայտարարեց, որ Սեմ Բեթլը, որը առցանց հայտնի է որպես LOOK MUM NO COMPUTER, կներկայացնի Մեծ Բրիտանիան այս տարվա «Եվրատեսիլ»-ում: Բեթլը փորձարարական էլեկտրոնային երաժիշտ է եւ էլեկտրոնային երաժշտությանը նվիրված YouTube ալիքի ստեղծող: Նրա կենդանի ելույթները, որոնցում նա վերստեղծում է լեգենդար հիթեր հսկայական ինքնաշեն սինթեզատորի վրա, արդեն վիրուսային են դարձել:

Անորոշ ժամանակով հետաձգում

Անցյալ ուրբաթ հրապարակված հայտարարության մեջ «Եվրատեսիլ» երգի մրցույթի տնօրեն Մարտին Գրինն ասել է. «Մենք բախվեցինք անսպասելի դժվարությունների, որոնք, չնայած մեր թիմի, պրոդյուսերների եւ կազմակերպիչների լավագույն ջանքերին, չկարողացանք հաղթահարել: Շնորհակալություն հազարավոր երկրպագուներին, ովքեր տոմսեր են գնել»: Ըստ Գրինի՝ շրջագայությունը նախատեսվում է վերսկսել ավելի ուշ, բայց առայժմ ամբողջ ուշադրությունը կենտրոնացած է արագ մոտեցող հիմնական մրցույթի վրա. «Մենք անհամբեր սպասում ենք համերգային շրջագայության վերսկսմանը, երբ կարողանանք երաշխավորել մեր երկրպագուների կողմից սպասվող համաշխարհային մակարդակի փորձը: Մեր առաջնահերթությունն է մայիսին ապահովել անհավանական «Եվրատեսիլ» երգի մրցույթ»:

«Եվրատեսիլ» երգի մրցույթի եզրափակիչը տեղի կունենա մայիսի 16-ին Վիեննայում (Ավստրիա):

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Երեւանում փետրվարի 21-ին կմեկնարկի Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի Ժամանակակից երաժշտության փառատոնը: Երաժշտական այս տոնն անցկացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ եւ Հայաստանի կոմպոզիտորների միության հետ համատեղ: Փառատոնի ռազմավարական գործընկերն է «GTB» հոլդինգս ընկերությունը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբից հայտնում են, որ մինչեւ մարտի 17-ը տեղի ունենալիք փառատոնի շրջանակում կանցկացվի 6 համերգ, հանդես կգա 5 մենակատար, կինչի հայ եւ արտասահմանցի 16 կոմպոզիտորի 21 ստեղծագործություն: Երաժշտասերները հնարավորություն կունենան ունկնդրելու համաշխարհային պրեմիերաներ: Փառատոնի բացման համերգին տեղի կունենա Վիգ Զարթմանի դաշնամուրի կոնցերտի համաշխարհային պրեմիերան: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ կունենան աշխարհահռչակ թավջութակահար, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի 20-րդ հոբելյանական համերգաշրջանի ռեզիդենտ արտիստ Մարիո Բրունելլոն, անվանի դաշնակահարներ Աշոտ Խաչատուրյանը, Հեղինե Ռափյանը, Ռուբեն Կոզինը եւ ջութակահար Ռոման Կիմը:

Ժամանակակից երաժշտության փառատոնը հիմնադրվել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի կողմից՝ հայ դասական եւ արդի կոմպոզիտորական արվեստը հայ ունկնդրին ներկայացնելու եւ հանրահռչակելու առաքելությամբ:

Փառատոնի գլխավոր նպատակն է հայ կոմպոզիտորական արվեստի ժառանգության պահպանումը: Այդ ուղղությամբ իրականացվում է հայ կոմպոզիտորական արվեստի ճանաչողության բարձրացմանն ուղղված աշխատանքների մի ամբողջ շղթա՝ սիմֆոնիկ ստեղծագործությունների ձայնագրումից, տեսագրումից եւ միջազգային հարթակներում թողարկումից մինչեւ նոտաների թվայնացում եւ հրատարակում:

«GTB» հոլդինգս ընկերության հետ գործընկերության արդյունքում Universal Edition խոշոր հրատարակչական հարթակը կսկսի հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների հրատարակումը՝ լուծելով հայ կոմպոզիտորների ստեղծագործական ժառանգության պահպանման հարցը եւ նպաստելով դրանց հանրահռչակմանը միջազգային տիրույթում: Universal Edition հրատարակչական հարթակից օգտվում են աշխարհի բոլոր նվագախմբերն ու մենակատարները՝ ընտրելու ստեղծագործություններ համերգաշրջանների եւ համերգների համար: Համագործակցությունը նոր էջ է բացում մեր կոմպոզիտորների համար, որի արդյունքում ժամանակակից ավտոմատ համակարգով պաշտպանվում են կոմպոզիտորների հեղինակային եւ գույքային իրավունքները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» գերմանացի գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը մեկնաբանել է «Ժիրոնայից» կրած պարտությունը Իսպանիայի առաջնության 24-րդ տուրում: «Առաջին խաղակեսում շատ պահեր ստեղծեցինք, հետո արդեն «Ժիրոնան» ուներ խաղային առավելություն: Երկրորդ խաղակեսում վատ խաղացինք, հակագրոհների ժամանակ պաշտպանությունում անհաջող գործեցինք: Մրցակիցը արժանի էր հաղթանակի, քանի որ մենք լավը չէինք եւ չափազանց շատ սխալներ թույլ տվեցինք: Այս պահին ինչ-որ բան մեզ մոտ չի ստացվում: Պետք է վերադառնանք նախկին խաղամակարդակին եւ նորից սկսենք լավ խաղալ: Ֆուտբոլիստներին հանգիստ է պետք: Սա երկար ճանապարհ է, մենք կվերադառնանք», -Ֆլիկի խոսքերը մեջբերում է Marca-ն:

Գերմանացի մարզիչի գլխավորած թիմը Իսպանիայի առաջնության 24-րդ տուրում «Ժիրոնային» պարտվեց 1:2 հաշվով:

ՌԱՍԻՍՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ ՉԷ

Պորտուգալական «Բենֆիկայի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն պատասխանել է Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորին, որը լիսաբոնյան ակումբի ներկայացուցիչներին եւ երկրպագուներին մեղադրել էր իր նկատմամբ ռասիստական արտահայտությունների համար:

«Երբ այդպիսի գոլ ես խփում, պետք է ավելի հարգալից տոնես այն: Կարծում եմ՝ Վինիսիուսը դիմեց սադրանքի: Հետո նա եւ Պրեստիանին փոխանակվեցին մի քանի խոսքով: Ես ցանկանում եմ չեզոքություն պահել: Լսել եմ տարբեր տեսակետներ, բայց ցանկանում եմ լինել չեզոք եւ չմեկնաբանել: Երբ Վինիսիուսը սկսեց վիճել ռասիզմի վերաբերյալ, ես պատասխանեցի, որ «Բենֆիկայի» գլխավոր լեգենդը (Էյսեբիոն) սեւամորթ էր, «Բենֆիկան» ռասիստների ակումբ չէ»,- Մոուրինյոյի խոսքը մեջբերում է Goal.com-ը:

Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆի առաջին խաղում «Ռեալը» Լիսաբոնում «Բենֆիկային» հաղթել էր 1:0 հաշվով Վինիսիուսի գոլի շնորհիվ: Դիպուկ հարվածից հետո սեւամորթ ֆուտբոլիստը մոտեցել էր անկյունայինի դրոշակին եւ սկսել պարել՝ առաջացնելով լիսաբոնյան ակումբի ֆանատների դժգոհությունը: Վինիսիուսը հայտարարել էր, որ իրեն անվանել են «կապիկ»:

ԱՎԱՐՏԵՑ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան շնորհակալություն է հայտնել Տիգրան Բարսեղյանին ազգային թիմում անցկացրած տարիների համար: «Շնորհակալություն այս տարիների աշխատանքի, գոլերի, անմնացորդ նվիրման համար, Տիգրան. 64 հանդիպում, 9 գոլ»,- գրել է ՀՖՖ-ն:

Բրատիսլավայի «Սլովանի» 32-ամյա հարձակվող Տիգրան Բարսեղյանը հայտարարեց Հայաստանի հավաքականում կարիերան ավարտելու մասին:

Տիգրան Բարսեղյանն ազգային թիմում հանդես էր գալիս 2016 թվականից՝ 64 խաղում խփելով 9 գոլ:

● *Փետրվարի 20-ին՝ ժամը 19:30-ին, «Փոքր թատրոն» գեղագիտության ազգային կենտրոնում տեղի կունենա «Որդին» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչն է հիմք հանդիսանում հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելու համար:

Ռուզան Մկրտչյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելիս հիմք է ընդունվում ամբուլատոր քարտում առկա ախտորոշումը կամ հիվանդանոցային կազմակերպության կողմից տրված հիվանդության պատմությունից գրված քաղվածքը (էպիկրիզը): Ելնելով հիվանդությունից, եթե հիվանդին բժշկի ցուցումով նշանակվել է հիմնական դեղերի ցանկում չընդգրկված դեղ, ապա ամբուլատորպոլիկլինիկական բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի եզրակացության հիման վրա հիվանդին դուրս է գրվում դեղ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հուլիսի 7-ի N 11-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեգեստրի)» ցանկից:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի դեղատոմսերը դուրս են գրվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դեղատոմսային ձեւաթղթերը հաստատելու մասին» N 759 որոշման եւ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղատոմսի դուրսգրման եւ դեղերի բաց թողնման կարգի» N 100 հրամանի պահանջներին համապատասխան:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ՀՀ մշտական բնակության ժամանող անձի անձնական ավտոմեքենան առանց մաքսատուրքի վճարման ՀՀ ներմուծելու համար ավտոմեքենայի համար ի՞նչ պահանջներ են սահմանվում:

Պողոս Մնացականյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ նրա լիազորած անձի կամ նրա հանձնարարությամբ եւ անունից հանդես եկող մաքսային ներկայացուցչի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Արեւագալի ժամերգությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 7 - 12 + 2 + 5
	Կոտայքի լեռներ	- 8 - 11 + 3 + 5
	Կոտայքի նախալեռներ	- 1 - 4 + 8 +12
	Գեղարքունիք	- 5 - 9 + 4 + 7
	Լոռի	- 3 - 7 + 10 + 13
	Տավուշ	- 2 - 6 +10 + 13
	Արագածոտնի լեռներ	- 8 - 12 + 1 + 4
	Արագածոտնի նախալեռներ	0 - 5 + 7 + 12

	Արարատ	- 1 + 2 +10 + 12
	Արմավիր	0 + 3 +11 + 13
	Վայոց ձորի լեռներ	- 5 - 9 + 2 + 5
	Վայոց ձորի նախալեռներ	0 + 3 +10 + 14
	Սյունիքի լեռներ	- 4 - 8 + 1 + 3
	Սյունիքի նախալեռներ	- 2 - 6 + 8 + 13
	Սյունիքի հովիտներ	+ 2 + 6 +17 + 20
	Երեւան	0 + 2 + 12 + 14

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*